

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ**

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1.** Հայաստանի պետական ագրարային համալսարանի ուսումնամեթոդական կենտրոնը (այսուհետև՝ Կենտրոն) համալսարանի կրթական բարեփոխումների պլանավորման և իրականացման, համալսարանի զարգացման ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման, ինքնագնահատման ու ինքնավերլուծության և հավատարմագրման նախապատրաստման, ուսումնամեթոդական գործընթացի պլանավորման, կազմակերպման և վերահսկման, մինչհամալսարանական, լրացուցիչ, շարունակական կրթության, վերապատրաստման և մասնաճյուղերի ուսումնամեթոդական գործունեության համակարգման աշխատանքները իրականացնող կառույց է:
- 1.2.** Ուսումնամեթոդական կենտրոնն իր գործունեությունը կանոնակարգում է ՀՀ կրթության և գիտության նախարարության նորմատիվային փաստաթղթերով, համալսարանի գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումներով, ռեկտորի հրամաններով և սույն կանոնակարգով:
- 1.3.** Ուսումնամեթոդական կենտրոնը ղեկավարում է պրոռեկտոր-տնօրենը, որին աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է համալսարանի ռեկտորը:
- 1.4.** Ուսումնամեթոդական կենտրոնի պրոռեկտոր-տնօրենը ի պաշտոնե ընդգրկվում է համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի կազմերում:
- 1.5.** Ուսումնամեթոդական կենտրոնի կառուցվածքը հաստատվում է համալսարանի գիտական խորհրդի կողմից և վավերացվում է ռեկտորի հրամանով:

2. Ուսումնամեթոդական կենտրոնի կառուցվածքը և ղեկավարումը

- 2.1.** Ուսումնամեթոդական կենտրոնը կազմված է երկու վարչություններից և մեկ առանձին բաժնից: Յուրաքանչյուր վարչության կազմում ընդգրկված է երկու բաժին

2.2. Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման և ինքնավերլուծության վարչության, որի կազմում են.

2.2.1. Կրթական բարեփոխումների և ռազմավարական պլանավորման բաժին

2.2.2. Որակի վերահսկողության և ինքնավերլուծության բաժին

2.3. Ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման վարչություն, որի կազմում են.

2.3.1. Ուսումնամեթոդական և ուսումնական գործընթացի պլանավորման բաժին

2.3.2. Ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժին

2.3.3. Մինչհամալսարանական, լրացուցիչ, շարունակական կրթության, վերապատրաստման և մասնաճյուղերի ուսումնամեթոդական, գործունեության համակարգման բաժին:

2.4. Կենտրոնի հաստիքային աշխատակիցների պարտականությունները բխում են Կենտրոնի իրականացրած գործառույթներից, նպատակներից ու խնդիրներից և սահմանվում են սույն կանոնակարգով և պրոռեկտոր-տնօրենի հանձնարարականներով:

2.5. Կենտրոնի հաստիքային աշխատակիցները պաշտոններում նշանակվում և պաշտոններից ազատվում են ռեկտորի հրամանով՝ կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի առաջարկությամբ:

3. Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման և ինքնավերլուծության վարչության

3.1. 3.1. Կրթական բարեփոխումների և ռազմավարական պլանավորման բաժին
Կրթական բարեփոխումների և ռազմավարական պլանավորման բաժնի խնդիրները և գործառույթները.

- Բոլոնիայի հռչակագրի հիմնական դրույթներին համապատասխան կրթական նոր տեխնոլոգիաների ներդրում ու դրանց հետագա ընդլայնում,
- համալսարանի առաքելությունից բխող՝ համալսարանի զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական պլանավորում,

- համալսարանի առաքելությունից բխող՝ համալսարանի զարգացման հիմնական գերակայությունների, նպատակների և խնդիրների բացահայտում և ամրագրում,
- համալսարանի առաքելության, սահմանված նպատակների և խնդիրների վերնայման քաղաքականության մշակում և իրականացում,
- համալսարանի առաքելության, նպատակների, խնդիրների և ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքների գնահատման քաղաքականության ու ընթացակարգերի մշակում և իրականացում,
- համալսարանի բոլոր կրթական ծրագրերում (միջին մասնագիտական, բակալավրային, մագիստրոսական, ասպիրանտական) կրեդիտային համակարգի ներդրում,
- Եվրոպական կրթական ծրագրերի չափանիշներին համապատասխան համալսարանի բակալավրային և մագիստրոսական կրթական աստիճանների բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակությունների, որակավորման բնութագրիչների, ավարտական ատեստավորման ցուցանիշների վերանայում և նորացում, դրանց գնահատման ցուցանիշների սահմանում,
- նոր կրթական և մանկավարժական տեխնոլոգիաների ներդրում, դասախոսների որակավորման և վերապատրաստման արդյունավետ և գործուն մեխանիզմների մշակում և ներդրում.
- համակարգչային ծրագրերով ուսումնական գործընթացի ապահովում,
- ինովացիոն կրթական ծրագրերի ներդրման և զարգացման համալսարանական տեղեկատվական-խորհրդատվական համակարգի ձևավորմանը աջակցում,
- «Էլեկտորանյին դեկանատի» ստեղծման և ուսանողների խորհրդատուների ինստիտուտի ձևավորման համապատասխան կանոնակարգի մշակում ու հաստատում,
- ուսումնական գործընթացներում ինովացիոն սկիզբունքների ներդրում, դասախոսների հսկողությամբ ուսանողի ինքնուրույն աշխատանքի դերի բարձրացում,
- մոդուլային սկզբունքով նոր ուսումնական պլանների վերակազմում,

- համալսարանում ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային-ռեյթինգային համակարգի լիակատար ներդրում՝ լայնորեն կրատելով դիպոզիտի, ֆորմատիվ և սումատիվ գնահատումները,
- համալսարանի առաքելությունից և ռազմավարական զարգացման գլխավոր ուղղություններից բխող՝ համալսարանի կրթական ծրագրերի լրամշակման, համալսարանի տարածքային ռեսուրսների հաշվառման, ուսանողական համակազմի համալրման, ֆինանսական ռեսուրսների և տեղեկատվական տեխնոլոգիաների պլանավորման իրականացում,
- պլանավորման միջոցով՝ համալսարանի տարբեր մակարդակներում իրականացվող կրթական, գիտական, խորհրդատվական և այլ գործընթացների փոխկապակցվածության և դրանց գործունեության արդյունավետության ապահովում,
- պլանավորման միջոցով՝ համալսարանի առանձին ստորաբաժանումների, ֆակուլտետների, ամբիոնների ու կառուցվածքին այլ ստորաբաժանումների փոխգործողությունների ներդաշնակության ապահովում,

3.2. Որակի վերահսկողության և ինքնավերլուծության բաժին

Որակի վերահսկողության և ինքնավերլուծության բաժինը կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական գործառույթը հանդիսանում է համալսարանի որակի ապահովման համակարգի և դրան վերաբերվող փաստաթղթային փաթեթի մշակումը, ներդրումը և կատարելագործումը:

Որակի վերահսկողության և ինքնավերլուծության բաժնի խնդիրները և գործառույթները.

- կրթության որակի ապահովման ներբուհական նոր մեխանիզմների մշակում ու ներդրում, որակի ապահովման համապատասխան ներքին մեխանիզմների ու ստորաբաժանումների շարունակական զարգացման և կատարելագործման գործուն համակարգի ստեղծում,

- որակավորումների ազգային շրջանակի մակարդակները հաշվի առնող՝ համալսարանում կրթության որակի շարունակական բարելավման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և կատարելագործում,
- համալսարանի կողմից՝ իր կրթական ծրագրերի պարբերական վերանայման ու մոնիթորինգի, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների վերահսկման մեխանիզմների ստեղծում ու կատարելագործում,
- ուսանողների գնահատման համակարգի ընդհանուր կատարելագործում և գնահատման չափանիշների, կանոնակարգերի և ընթացակարգերի հրապարակայնության ապահովում,
- որակի ապահովման հետադարձ կապի կայուն համակարգի ու մեխանիզմների ստեղծում,
- համալսարանում որակի Եվրոպական ու ազգային չափանիշների, չափորոշիչների և ուղենիշների ներդրում, որակյալ ու մրցունակ կրթության ապահովում, Բոլոնիայի հռչակագրի հիմնական դրույթների համապատասխան կրթական նոր ծրագրերի ու տեխնոլոգիաների ներդրում ու հետագա ընդլայնում,
- որակի ապահովման ներքին համակարգի զարգացման և կատարելագործման միջոցով՝ համալսարանում ներբուհական որակի ապահովման նկատմամբ դասախոսական անձնակազմի և ուսանողության պատասխանատվության բարձրացում,
- համալսարանում մասնագիտական կրթական համակարգի բովանդակային, կառուցվածքային և մշակութային վերափոխմանը միտված որակի շարունակական բարելավում,
- համալսարանում գիտակրթական գործունեության որակի ապահովման գործընթացի շարունակական բարելավում, գիտակրթական համակարգի մոնիթորինգի և գնահատման արդյունքների հիման վրա կրթության որակի ստուգման ու կառավարման համակարգի կատարելագործում,
- համալսարանաի ուսուցման որակի կառավարման կազմակերպական և որակի ապահովման համակարգի ֆունկցիոնալ կառուցվածքային սխեմաների մշակում և հաստատում,

- պետական հավատարմագրման ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) և մասնագիտության կրթական ծրագրերի (ծրագրային) հավատարմագրում անցնելու նպատակով, ՈԱԱԿ-ի «Ինքնավերլուծության ձևաչափերի» հիման վրա, համալսարանում ինքնագնահատման և ինքնավերլուծության մեխանիզմների մշակում և ինքնավերլուծություն իրականացում:

4. Ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման վարչություն

4.1. Ուսումնամեթոդական և ուսումնական գործընթացի պլանավորման բաժին:

Ուսումնամեթոդական և ուսումնական գործընթացի պլանավորման բաժնի գործառույթները.

Ուսումնական գործընթացի պլանավորում`

- գործող և նոր մասնագիտությունների ուսումնական գործընթացի կազմակերպման նորմատիվային փաստաթղթերի (ուսումնական պլաններ, ծրագրեր չափորոշիչներ) վերաբերյալ ստացված առաջարկությունների քննարկում և մշակում,
- ուսումնամեթոդական գրականության պահանջարկի վերլուծություն և դրանց նախապատրաստման և հրատարակման պլանավորում,
- լսարանային ֆոնդի կանխատեսում և պլանավորում,
- պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների և տարակարգերի պլանավորում,
- մասնագետների պատրաստման, կատարելագործման ընթացիկ և հեռանկարային պլանի կազմում,
- ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման կատարելագործման աշխատանքների պլանավորում,
- պրոֆեսորադասախոսական կազմի մեթոդական աշխատանքների համակարգում, մեթոդական աշխատանքների կատարելագործման վերաբերյալ վերլուծության իրականացում և առաջարկությունների ներկայացում,

- կրթական և մեթոդական մոդելավորման, կրթական նոր տեխնոլոգիաների ու ուսուցման ժամանակակից մեթոդների մշակման և ներդրման աշխատանքների պլանավորում,
- համալսարանի կրթական տարբեր աստիճանների մասնագիտությունների լիցենզավում, այդ աշխատանքները բոլոր ստորաբաժանումների հետ համակարգում,
- առարկայական ծրագրերի ուսումնասիրում, վերլուծություն և առաջարկությունների քննարկում,
- ուսումնական գործընթացի նյութատեխնիկական բազայի ապահովման աշխատանքների պլանավորում և համապատասխան առաջարկությունների ներկայացում,
- պրոֆեսորադասախոսական կազմի, ամբիոնների և ֆակուլտետների կիսամյակային և տարեկան ծանրաբեռնվածության կազմում, հաշվառում, ու համակարգում,
- պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների հաշվարկում, դասախոսների անհատական և ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածության պլան-կատարողականի ստուգում, ժամավճարային ֆոնդի օգտագործման արդյունավետության վերահսկում և վերլուծություն,
- ուսումնամեթոդական աշխատանքների վերաբերվող փաստաթղթերի, ձևերի, տեղեկանքների և հրամանների նախապատրաստում, դեկանատներին և ուսումնական այլ ստորաբաժանումներին ուսումնական ձևերի և փաստաթղթերի տրամադրում,
- նախորդ կիսամյակի արդյունքներով, յուրաքանչյուր կիսամյակում ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման անանուն հարցման իրականացում և ստացված արդյունքների մշակում,
- ուսումնական գործընթացի լսարանային ապահովման նպատակով, լսարանային ֆոնդի հաշվառում և նպատակային բաշխում,
- պետական քննական հանձնաժողովների աշխատանքների արդյունքների ամփոփում, վերլուծություն և առաջարկությունների ներկայացում,

- վկայականների, ակադեմիական տեղեկանքների և այլ կրթական փաստաթղթերի սահմանված կարգով և ժամանակին ձևակերպում և տրամադրում,
- ամբիոններին և դեկանատներին ուսումնական գործընթացի վերաբերյալ նոր օրենքների, օրենսդրական ակտերի, կարգերի, հրահանգների և այլ դիրեկտիվ ցուցումների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ներկայացում:

5. Ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժին

Ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնի խնդիրներն ու գործառույթները.

- ֆակուլտետներում, ամբիոններում և ուսումնական այլ ստորաբաժանումներում ուսումնական գործընթացի կազմակերպման, բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշիչներին համապատասխան ուսումնական պլանների և ծրագրերի ներդրման աշխատանքների հսկում,
- ֆակուլտետների, ամբիոնների և ուսումնական այլ ստորաբաժանումների բոլոր մասնագիտությունների գծով կրթական պետական ստանդարտների ներդրման և իրականացման կազմակերպում և վերահսկում,
- ժամանակակից կրթական տեխնոլոգիաների, ուսումնական համակարգչային ծրագրերի ներդրման կազմակերպական աշխատանքներին օժանդակում,
- ֆակուլտետների և ամբիոնների կրթական, ուսումնական աշխատանքների ժամավճարների կազմման, բաշխման և կատարման, ուսումնական գործընթացի, գրաֆիկների, անհատական պլանների կազմման, ձևավորման ու ժամանակին դրանց կատարման կազմակերպում և վերահսկում,
- ըստ դասացուցակի ուսումնական պարապմունքների կազմակերպման, կիսամյակային քննությունների գրաֆիկաների կազմման և ներդրման աշխատանքների ստուգում և վերահսկում,

- դասախսությունների, սեմինարների, գործնական ու լաբորատոր պարապմունքների անցկացման որակի գնահատման չափանիշների մշակում,
- ֆակուլտետների և ամբիոնների կողմից ուսանողների ուսումնական, արտադրական, նախադիպլոմային պրակտիկաների, գործնական և այլ կիրառական (բանվորական մասնագիտությունների ձեռքբերման) աշխատանքների համակարգում, կազմակերպում և վերահսկում,
- թողարկող (մասնագիտացնող) ամբիոնների հետ համատեղ ուսումնաարտադրական, նախադիպլոմային պրակտիկաների օբյեկտների ընտրության, դրանց շրջանակների ընդլայնման և պայմանագրերի կնքման աշխատանքների կազմակերպում և իրականացում,
- աջակցության շրջանավարտներին աշխատատեղերով ապահովման գործընթացին, այդ նպատակով գործարանների, ֆերմերային տնտեսությունների գյուղատնտեսական վերամշակող և այլ ձեռնարկությունների, մարզպետարանների և այլ հաստատությունների ու կազմակերպությունների հետ կապերի հաստատում,
- քննաշրջանների արդյունքների ամփոփում և վերլուծություն, ուսանողների շարժի հաշվառում և վիճակագրության իրականացում,
- պետական քննական հանձնաժողովների կազմի նախապատրաստում և հաստատման ներկայացում, հանձնաժողովների աշխատանքների համաձայնեցում և ժամկետավորում,
- պետական քննությունների և դիպլոմային աշխատանքների (նախագծերի) պաշտպանության արդյունքների ամփոփում և վերլուծություն:

6. Մինչհամալսարանական, լրացուցիչ, շարունակական կրթության, վերապատրաստման և մասնաճյուղերի ուսումնամեթոդական գործունեության համակարգման բաժին

Մինչհամալսարանական, լրացուցիչ, շարունակական կրթության, վերապատրաստման և մասնաճյուղերի ուսումնամեթոդական գործունեության

համակարգման բաժինը, հանրակրթական, լրացուցիչ, շարունակական մասնագիտական ծրագրերի ուսուցման գործընթացը համակարգող, հանրապետության գյուղատնտեսական ուսումնական հաստատությունների և գյուղատնտեսական արտադրության մասնագետների պատրաստման, վերապատրաստման ու որակավորման բարձրացման, ուսումնական և գիտամեթոդական աշխատանքների իրականացնող և մասնաճյուղերի ուսումնամեթոդական գործունեությանը համակարգող առանձին ստորաբաժանում է:

Բաժնի խնդիրները և գործառույթները.

- ՀՊԱՀ-ի հենակետային վարժարանի, մարզային ավագ դպրոցների մինչհամալսարանական կրթության համագործակցության կորդինացում, ուսումնամեթոդական օգնության ցուցաբերում, աշակերտների շրջանում մասնագիտական կողմնորոշման իրականացում,
- ավագ դպրոցների բարձր դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ աշխատանքների իրականացում,
- հանրապետությունում գործող ավագ դպրոցների և վարժարանների հետ համատեղ կրթական գործունեության իրականացման վերաբերյալ երկարաժամկետ համաձայնագրերի կնքում, այդ դպրոցներում բազային դասարանների ստեղծում և համալսարանի ֆակուլտետների հետ դրանց կապի ստեղծում,
- համալսարանի ընդունելության համակարգի կատարելագործում, ուսանողական համակարգի ընդլայնմանն ուղղված՝ դիմորդների կայուն հոսքի ապահովում,
- համալսարանի ընդունելության կառուցվածքի, չափանիշների, աշխատաշուկայի և դիմորդների թվաքանակի համապատասխանեցման վերլուծություն,
- աշխատաշուկայի առկա պահանջների և միտումների, պոտենցիալ դիմորդների նախասիրությունների (կողմնորոշվածության), կրթական կարիքների արտաքին բարենպաստ հնարավորությունների, ներքին չօգտագործված կարողությունների բացահայտման ու գնահատման նպատակով՝ համալսարանի արտաքին և ներքին միջավայրերի վերլուծության իրականացում,

- ուսանողների, շրջանավարտների և դասախոսական անձնակազմի լրացուցիչ ու շարունակական մասնագիտական ուսուցման պլանավորման և կազմակերպման, այդ գործընթացների կատարելագործման հնարավորությունների և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայրի ստեղծում:
- շահագրգիռ կազմակերպությունների հետ կրթական ու ուսումնամեթոդական ծրագրերի իրականացնելու ուղղությամբ համալսարանի ղեկավարությունը պայմանագրային կապեր հաստատելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- անհրաժեշտ վերահսկողություն է իրականացնում վարժարանի մանկավարժական կազմի գործունեության, անհրաժեշտ վերահսկողություն, նրանց կազմի ընտրության վերաբերյալ առաջարկություններ ներկայացնում,
- վարժարանի ավարտական քննությունների կազմակերպում և վերահսկում,
- հենակետային վարժարանի գործունեության վարժարանի և համալսարանի հանրակրթական ամբիոնների և գյուղական դպրոցների համագործակցության, ինչպես նաև բոլոր մակարդակներում լրացուցիչ կրթական ծրագրերի ուսուցման համակարգում,
- դասախոսական անձնակազմի որակավորման բարձրացում,
- արտասահմանյան առաջատար ուսումնական հաստատությունների հետ համագործակցություն իրականացում,
- ուսանողների և շրջանավարտների լրացուցիչ կրթական ծրագրերի ուսուցման կազմակերպում,
- հանրապետության գյուղատնտեսական ուսումնական հաստատությունների և գյուղատնտեսական արտադրության մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման նպատակով՝ ուսումնական և գիտամեթոդական աշխատանքների իրականացում,
- դասախոսների գիտական և գիտամեթոդական մակարդակի բարձրացում, դասավանդման առաջավոր փորձի ընդհանրացում և տարածում,

ուսումնական գորընթացում ուսուցման նորագույն գիտական մեթոդների և տեխնիկական միջոցների ներդրում,

- գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող, բայց գյուղատնտեսական կրթություն չունեցող անձանց ուսուցուման կազմակերպում և որակավորման բարձրացում,

- գիտահետազոտական, նախագծային, գիտաարտադրական ձեռնարկություններում և բուհերում համալսարանի դասախոսների որակավորման բարձրացում և ստաժավորում,

-

7. Ուսումնամեթոդական կենտրոնի լուծարումը (գործունեության կանխումը)

Ուսումնամեթոդական կենտրոնը վերակազմակերպվում կամ լուծարվում է գիտական խորհրդի որոշումով: